



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ  
 ՏԵՆՎՈՐԻ ԵՒ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ**

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնական ուրախ օրերու առիթով, մեր հեռակայ շրջաններու ծխականները եւս առիթը կ'ունենան տօնական օրերը դիմաւորելու Ս. Պատարագի արարողութեամբ:

Կիրակի, Յունուար 7-ին, Արժ. Տ. Նարեկ Բիւյ. Փեղիվանեան պիտի այցելէ Տենվոր, ուր Ս. Պատարագ պիտի մատուցէ ու քարոզէ Զոլորատօ եւ Ռաքի Մաունթընի մեր եկեղեցւոյ ծխական համայնքի զաւակներուն համար:

Արժ. Տ. Խորէն Ա. Բիւյ. Հապէշեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ քարոզէ Լաս Վեկասի մեր ծխական համայնքի զաւակներուն համար:

**HOLY MASS AT THE COLORADO AND LAS VEGAS PARISHES**

On Sunday, January 7, Holy Mass will be offered at our parishes in Colorado and Las Vegas on the occasion of the New Year and the Nativity and Epiphany of our Lord, Jesus Christ.

Rev. Nareg Pehlivanian will be at the Armenian Apostolic Church of Colorado and the Rocky Mountain Region where he will conduct Mass and deliver the sermon.

Archpriest Fr. Khoren Habeshian will conduct Mass and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Las Vegas.

**ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՆԵՐ Կ'ՕՐՀՆԵՆ  
 ԲՈՂՈՔԻ ՀԱՅԱԴՈՒՄ ԸՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ**

Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը եւ Մարդկային Իրաւանց Միացեալ Խորհուրդը, գործակցաբար, չորսօրեայ հացադուլ մը կազմակերպած են Լոս Անճելըսի թրքական հիւպատոսարանին առջեւ: Յոյցը սկսաւ Երեքշաբթի, 2 Յունուար երեկոյեան եւ պիտի շարունակուի մինչեւ Շաբաթ, 6 Յունուարի երեկոյեան:

Հացադուլին նպատակն է Հայկական Ցեղասպանութիւնը ոգեկոչել եւ այդ ուղղութեամբ հանրութիւնը լուսաբանել: Թեմիս հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Աշոտ Բիւյ. Գամպուրեան մասնակից եղաւ հացադուլի բացման, իսկ Արժ. Տ. Վազգէն Բիւյ. Աթմաճեան փակումին, աղօթքով օրհնելու համար հացադուլի դիմողներն ու անոնց նախաձեռնութիւնը:

## **ARMENIAN YOUTH FEDERATION FAST FOR REMEMBRANCE**

The Armenian Youth Federation, in collaboration with the United Human Rights Council, has organized a four-day “Fast for Remembrance” in front of the Turkish Consulate in Los Angeles to raise awareness of the Armenian Genocide. The fast began on the evening of Tuesday, January 2<sup>nd</sup>, and will continue until the evening of Saturday, January 6<sup>th</sup>.

Rev. Ashod Kambourian, pastor of Holy Cross Cathedral, was present at the start of the fast to offer prayers and encouragement to the participants. Rev. Vazken Atmajian, pastor of St. Mary’s Church, will be present at the end of the fast to offer blessings.